HIS HOUSE MINISTRIES
Hishouseofworship.org
info@hishouseofworship.org
Phone: 916-856-5683

Տեսեք ձեզ այնպիսին, ինչպիսին դուք իրականում եք

Դուք Աստծո զավակ եք, դուք ստեղծված եք Նրա պատկերով, դուք արդարացվել եք և արդար եք հայտարարվել Նրա կողմից՝ Քրիստոսի ավարտված աշխատանքի և Նրա հանդեպ ունեցած հավատքի շնորհիվ: Քանի դեռ դուք հավատաք այս ճշմարտությանը և ապրեք այս ճշմարտությամբ, դուք գործնական աճ կունենաք ձեր առօրյա քրիստոնեական կյանքում: Այնուամենայնիվ, դուք կբախվեք դժվարությունների, եթե վիճարկեք Քրիստոսի ավարտված աշխատանքը և փորձեք դառնալ այնպիսին, ինչպիսին Նա արդեն դարձրել է ձեզ:

Մենք չենք ծառայում Աստծուն՝ ընդունված լինելու համար. մենք ընդունված ենք, և այդ պատճառով ծառայում ենք Աստծուն: Մենք չենք հետևում նրան՝ սիրված լինելու համար. մենք սիրված ենք, դրա համար էլ հետևում ենք Նրան: Մեր գործերը չեն որոշում մեր ինքնությունը. մեր ինքնությունն է որոշում մեր գործերը: «Սիրելիներ, հիմա Աստծո որդիներ ենք» (Ա Հովհաննես 3:2, շեղագիրն ավելացրած է): Սա է պատճառը, որ դուք կանչված եք հավատքով ապրելու համար (կարդացեք Հռոմեացիների 1:16, 17):

Դուք պետք է հավատաք բոլոր ճշմարտություններին, որոնք գրված են ձեր մասին, որպեսզի հաղթական քրիստոնեական կյանք ունենաք: Հնարավո՞ր է արդյոք, որ հակառակություն զգաք, երբ սկսեք հավատալ այս ճշմարտություններին: Իհա՛րկե: Ստի հայրը (կարդացեք Հովհաննես 8:44) խաբել է ողջ աշխարհը (կարդացեք Հայտնություն 12:19), և նա մեղադրում է եղբայրներին օր ու գիշեր (կարդացեք 12:10): Բացի այդ՝ մարդիկ կփորձեն ընկճել ձեզ: Մենք պետք է շարունակ հիշեցնենք ինքներս մեզ այս ճշմարտությունները մեր դիրքի մասին:

Այս արտահայտությունները ցույց են տալիս ձեր ինքնությունը Քրիստոսի մեջ: Բարձրաձայն կարդացեք այս ցուցակը, մինչև որ այն դառնա ձեր մասը: Ժամանակ առ ժամանակ աղոթեք ըստ այս ցուցակի, և խնդրեք Աստծուն դաջել այս ճշմարտությունները ձեր սրտում:

Նիլ Տ. Անդերսոնի "Հաղթել խավարը" գրքից

HIS HOUSE

ԻՄ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՍՈՒՄ

ՆԵՐՎԱԾ
ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՍՈՒՄ
ԱՍՏԾՈ ՏԱՃԱՐԸ ԱՐԴԱՐԱՑՎԱԾ
ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄԸ
ՄԵԿ ՀՈԳԻ ՆՐԱ ՀԵՏ
ՄԻԱՑԱԾ ՏԻՐՈՋ ՀԵՏ
ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄ
ԸՆԿԵՐ
ԱՍՏԾՈ ԶԱՎԱԿԸ
ՓՐԿԱԳՆՎԱԾ
ՈՐԴԵԳՐՎԱԾ
ԳՆՎԱԾ ՄԵԾ ԳՆՈՎ
ՄՈՒՏՔ ԴԵՊԻ ԾՆՈՐՀՔԻ ԳԱՀԸ
ՊԱՏԿԱՆՈՒՄ ԵՄ ԱՍՏԾՈՒՆ
ԸՆՏՐՎԱԾ
ԵՐԿՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻ
ՆՈՐ ՍՏԵՂԾՎԱԾ
ԱՍՏԾՈ ԳՈՐԾԱԿԻՑԸ
ԵՍ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԵՄ...
ԵՍ ԱՊԱՀՈՎ ԵՄ...
ԵՍ ԿԱՐԵՎՈՐ ԵՄ...

Ով եմ ես Քրիստոսում

«Եթե դուք ցանկանում եք հաջողակ և հաղթական քրիստոնեական կյանք ունենալ, էապես կարևոր է, որ հասկանաք ձեր ինքնությունը Քրիստոսի մեջ»:

Ես ընդունված եմ...

- Ես Աստծո զավակ եմ (Հովհաննես 1:12)
- Ես Քրիստոսի ընկերն եմ (Հովհաննես 15:15)
- Ես արդարացված եմ (Հռոմեացիների 5:1)
- Ես մեկ հոգի եմ Տիրոջ հետ (Ա Կորնթացիների 6:17)
- Ես մեծ գնով եմ գնված. ես պատկանում եմ Աստծուն: (Ա Կորնթացիների 6:19-20)
- Ես Քրիստոսի մարմնի անդամ եմ (Ա Կորնթացիների 12:27)
- Ես սուրբ եմ (Եփեսացիների 1:1)
- Ես որդեգրվել եմ՝ որպես Աստծո զավակ (Եփեսացիների 1:5)
- Ես կարող եմ մոտենալ Աստծուն Սուրբ Հոգով Եփես. 2:18)
- Ես փրկված ու ներված եմ (Կողոսացիների 1:14)
- Ես ամբողջական եմ Քրիստոսում (Կողոսացիների 2:10)

Ես ապահով եմ...

- Ես հավիտյան ազատ եմ դատապարտությունից (Հռոմ. 8:1-2)
- Ես վստահ եմ, որ ամեն բան գործում է ի բարին (Հռոմ. 8:28)
- Ես ազատ եմ իմ դեմ արված ցանկացած մեղադրանքից (Հռոմ. 8:31-34)
- Ինձ չեն կարող բաժանել Աստծո սիրուց (Հռոմ. 8:35-39)
- Ես հաստատված եմ, օծված եմ և կնքված եմ Աստծո կողմից (Բ Կորն. 1:21-22)
- Ես ծածկված եմ Քրիստոսի հետ Աստծո մեջ (Կող.3:3)
- Ես համոզված եմ՝ Աստված ավարտի կհասցնի այն բարի գործը, որը Նա սկսեց ինձանում (Փիլ. 1:6)
- Ես երկնքի քաղաքացի եմ (Փիլ. 3:20)
- Ինձ չի տրվել վախի հոգի, այլ զորության, սիրո և զգաստության (Բ Տիմոթեոս 1:7)
- Ես կարող եմ շնորհք և ողորմություն գտնեմ դժվար պահին (Եբրայեցիների 4:16)
- Ես ծնված եմ Աստծուց. չարը չի կարող դիպչել ինձ (Ա Հովհաննես 5:18)

Ես կարևոր եմ...

- Ես երկրի աղը և լույսն եմ (Մատթեոս 5:13)
- Ես ճշմարիտ որթի ճյուղն եմ, որով հոսում է Նրա կյանքը (Հովհ. 15:1, 5)
- Ես ընտրվել եմ և դրվել եմ՝ պտուղ բերելու համար (Հովհ. 15:16)
- Ես Քրիստոսի անձնական վկան եմ (Գործք 1:8)
- Ես Աստծո տաճարն եմ (Ա Կորնթացիների 3:16)
- Ես Աստծո հաշտության ծառայող եմ (Բ Կորնթացիների 5:17)
- Ես Աստծո գործակիցն եմ (Ա Կորնթացիների 3:9)
- Ես նստած եմ Քրիստոսի հետ երկնքում (Եփեսացիների 2:6)
- Ես Աստծո ստեղծվածն եմ (Եփեսացիների 2:10)
- Ես ազատորեն և վստահաբար կարող եմ մոտենալ Աստծուն (Եփեսացիների 3:12)
- Ես կարող եմ ամեն բան ինձ զորացնող Քրիստոսով (Փիլ. 4:13)

«Որքան ավելի վերահաստատեք ձեր ինքնությունը Քրիստոսի մեջ, այնքան ձեր վարքն ավելի կսկսի արտացոլել ձեր ճշմարիտ ինքնությունը»:

Դոկտոր Նիլ Անդերսոնի «Հաղթել խավարը» գրքից

Քանի որ ես Քրիստոսում եմ, Աստծո շնորհքով...

Այս արտահայտությունները ցույց են տալիս ձեր ինքնությունը Քրիստոսի մեջ: Բարձրաձայն կարդացեք այս ցուցակը, մինչև որ այն դառնա ձեր մասը: Ժամանակ առ ժամանակ աղոթեք ըստ այս ցուցակի, և խնդրեք Աստծուն դաջել այս ճշմարտությունները ձեր սրտում:

- Ես արդարացվել եմ՝ լիովին ներվել եմ և արդար եմ դարձել (Հռոմ. 5:1)
- Ես մահացա Քրիստոսի հետ՝ այն իշխանության համար, որը մեղքն ուներ իմ կյանքում (Հռոմ. 6:1-6)
- Ես հավիտյան ազատ եմ դատապարտությունից (Հռոմ. 8:1)
- Ես դրված եմ Քրիստոսում՝ Աստծո կողմից (Ա Կոր. 1:30)
- Ես ընդունել եմ Աստծո Հոգուն, որպեսզի կարողանամ ճանաչել այն բաները, որոնք Աստված ձրիաբար տվել է ինձ (Ա Կոր. 2:12)
- Ես ունեմ Քրիստոսի միտքը (Ա Կոր. 2:16)
- Ես մեծ գնով եմ գնվել. ես իմը չեմ. ես պատկանում եմ Աստծուն (Ա Կոր. 6:19, 20)
- Ես արդարացվել եմ (Բ Կոր. 5:21)
- Ես խաչվել եմ Քրիստոսի հետ և այլևս ես չեմ ապրում, այլ Քրիստոսն ինձանում: Այն կյանքը, որն այժմ ունեմ, Քրիստոսի կյանքն է (Գաղ. 2:20)
- Ես օրհնվել եմ ամեն հոգևոր օրհնությամբ (Եփ. 1:3)
- Ես ընտրված եմ Քրիստոսով աշխարհի ստեղծվելուց առաջ, որպեսզի սուրբ և անարատ լինեմ Նրա առջև (Եփ. 1:4)
- Ես նախասահմանված կամ որոշված էի Աստծո կողմից, որ Իրեն որդեգիր լինեի (Եփ.1:5)
- Ես ունեմ փրկություն և մեղքերի թողություն, և ես ստացել եմ Նրա առատ շնորհքը (Եփ.1:7)
- Ես կենդանացել եմ Քրիստոսի հետ (Եփ. 2:5)
- Ես հարություն եմ առել և նստած եմ Քրիստոսի հետ երկնքում (Եփ. 2:6)
- Ես մուտք ունեմ Աստծո մոտ Հոգու միջոցով (Եփ. 2:18)
- Ես ազատորեն, համարձակությամբ և վստահությամբ կարող եմ մոտենալ Աստծուն (Եփ. 3:12)
- Ես փրկվել եմ սատանայի իշխանությունից և տեղափոխվել եմ Քրիստոսի թագավորության մեջ (Կող. 1:13)
- Ես փրկվել եմ և ներվել եմ իմ բոլոր մեղքերից: Այն պարտքը, որը ես ունեի, չեղյալ է դարձվել (Կող. 1:14)
- Ես արմատացած եմ Քրիստոսում և այժմ շինվում եմ Նրանում (Կող. 2:7)
- Ես հոգևորապես թլփատված եմ: Իմ հին մարմնական բնությունը հեռացված է (Կող. 2:11)
- Ես ամբողջական եմ դարձել Քրիստոսում (Կող. 2:10)
- Ես թաղվել եմ, հարություն եմ առել և կենդանացել եմ Քրիստոսի հետ (Կող. 2:12, 13)
- Ես մահացա Քրիստոսի հետ և հարություն առա Քրիստոսի հետ: Այժմ իմ կյանքը ծածկված է Քրիստոսի հետ՝ Աստծո մեջ: Այժմ Քրիստոսն է իմ կյանքը (Կող. 3:1-4) Ինձ տրվել է զորության, սիրո և զգաստության հոգի (ԲՏիմ 1:7)
- Ես փրկվել եմ և առանձնացվել եմ Աստծո առաջադրության համեմատ (Բ Տիմ. 1:9, Տիտոս 3:5)
- Ես սրբված եմ և մեկ եմ ինձ Սրբողի հետ և Նա չի ամաչում ինձ եղբայր կոչելուց (Եբր.2:11)
- Ես իրավունք ունեմ համարձակությամբ գալու Աստծո գահի առջև, որպեսզի շնորհք և ողորմություն գտնեմ դժվար պահին (Եբր. 4:16)
- Ինձ տրվել են ամենամեծ և պատվական խոստումներ Աստծուց, որոնցով ես հաղորդակից եմ լինում Նրա աստվածային բնությանը (Բ Պետ. 1:4)

Նիլ Տ. Անդերսոնի "Կապանքները Քանդողը" գրքից